# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## № 111

## ԱՒԵՏԱՐԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 308։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 25. յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 21×15,5×5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ ընկել է։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից և վերջից երկուական թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն անկազմ։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 19։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ ոճով նկարված չորս ավետարանիչների նկարները, լուսանցազարդեր և կիսախորաններ, թռչնագրեր և զարդագրեր, խաչեր, կենդանիներ և ծառեր։— ԳՐԻՉԸ՝ դպիր Մուրատ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Ալահվերտի։—ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1655 թ.։— ՎԱՅՐԸ՝ Արարատյան երկրի Ակոռի գյուղ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ստացված է նվեր Հյուսիսային Կովկասից, մոզդոկցի Գևորգ Բողչանյանի կողմից։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. թ. 138բ— 139ա.— Ո՜վ յիմար, դու խելաց տկար, մոխիր և անպիտան գերի անկատար, գնայ լացիր ջանայ մեղացըդ համար, միթէ ճարակ լինի խղճիկ և յիմար։*

*Թ. 225բ.— Աղաչեմ զձեզ, չմեղայդրէք։*

*Թ. 226ա.— Գրեցի . . . . դու եղկելի,*
*Անպիտանակ մեղաւք ի լի,*
*Գնա ջանա գըտիր բարի,*
*Որ չընկըղմիս մեղաց ծովի։*

*Ո՜վ ընթերցող դու բարելի,*
*Ընտրեալ բիւրոց և անուանի,*
*Յերբոր նայիս դու հըմտելի,*
*Լի բերանով տաս ողորմի։*

*Թ. 230ա.— Յիշեա գրիչս Մուրատս։*

*Թ. 247ա.— Քրիստոս Աստուած յիշեա։*

*Թ. 303ա.— Յիշեա զմեղապարտ գրիչս դպիր Մուրատս և Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

*Փառք անըսկիզբնականին Հաւր և Որդւոյ նորա Միածնի և ամենասուրբ Հոգոյն ելւողի ի Նորին էութենէ։*

*Որոյ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղապարտ գրչի դպիր Մուրատի հասանել յաւարտ Սուրբ Աւետարանիս կարողութեամբ Աստուծոյ և զաւրութեամբն Սուրբ Հոգւոյն ի Թվականիս հայոց Ռ և ՃԴ (1655)։ Որ և ցանկացող եղև աստուածային պատուիրանացն զբարէմիտ և հեզահոգի Ալահվերտին և կողակիցն իւր Մարդէն և միւսն Խաթունփաշէն, ամէն։*

*Թ. 303բ.— Շնորհօք Սուրբ Հոգոյն աւարտեցաւ Սուրբ Աւետարանս։*

*Զոր է շաղկապեալ երանեալ աւետարանչացն։ Ըստ բազմերանգ գունոց ի ոստայն անկելով հանճար։ Զոր արուեստ արկեալ անուշացոց ծաղկանց և ղեփացական բազմութեամբ։ Որ ըստ հոգոյն յատկութեան իմանալի ղանազան որակութեամբ գաղափարելով ըստ յոքունց արփիայցելոցն դասակցութեան։ Առ ի յարմարումն եկեղեցւոյ յաւդիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ զի յայսմանէ կատարելութեամբ։ Զորս Աւետարանք ի բազում պատճառէ, չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ։ Զորս նիւթք* (թ. 304ա) *աշխարհիս՝ հող և ջուր, յաւդ և հուր, թշնամիք անհաշտելիք, սիրելիք քակտելիք։ Զորս չորք գիր անուան՝ ամենասուրբ Երրորդութեան, Հայր, Որդի, Հոգի։ Զորս գետք ելանեն ի դրախտէն Ադամայ՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս և Եփրատես։ Զորս ակունք և չորս եղջիւրք սեղանոյն։ Զորս դէմք Սրբոյ Խաչին։ Զորս առաքինութիւն հոգւոյ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն և արդարութիւն։ Զորս ծագ տիեզերաց՝ արևելք և արևմուտք, հիւսիս և հարաւ։ Զորս բան խաւսի Աւետարանն՝ պատգամ և պատուիրան, սպառնալիք և աւետիս։ Զորս բան Աւետարանիս, հրամանաւ և խրատովն, աւրինակաւ և վկայութեամբ։ Եւ այլ բազում պատճառք են, յորս գաղափարին չորեքեան Աւետարանքս, ի փառս ազատողին զգերեալս ի սատանայէ, զոր և ազատ արար Միածին Որդին հանդերձ Հարբ և Սուրբ* (թ. 304բ) *Հոգւով ազատեա զամենայն հաւատացեալքս Սուրբ Երրորդութեանդ և զուղղափառ դաւանողք քո մի մոռանար անարատ որդիքս Միածին ազատեա ի մեղսասէր և յանարգ գազանէն զամենայն ծնունդ սուրբ աւազանին, ամէն։ Որոյ ցանկացող եղեալ սրբազան Սուրբ Աւետարանիս աստուածասէր Ալլահվերտին և կողակից իւր Խաթունփաշէն և ստացան սրբազան Սուրբ Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրոց, որ դառն քրտամբք և չարչարանաւք վաստակեալ էր յիշատակ իւր և ծնաւղացն և մեծ պապին Շիրինին և կողակցին Ղարիպխաթունին և որդոյն Վէխսին, և նորա որդոյն Նուրփաշին, և նորա որդոյն Ալլահվերտուն և կողակցին Լատիւին, որդոյն Ամիրին, եղբարցն Թուխիկին, Յաղուպին և Ամիրին, և կողակիցն Գաւարն, և որդին Ալլահվերտին և կողակիցն Մարդէն և* (թ. 305ա) *միւս կողակից Խաթունփաշէն և հանգուցեալ որդին Ամիրն և դուստր Գօար Խանսուլթանն։ Եւ անդրանիկ որդին Սուքիասն,*

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № Ե-ից։

դուստր Աւղյան Գարաքն, զոր և Աստուած բարով վայելել տացէ, ամէն։

Դարձեալ աղաչեմք զքեզ սրբազան Սուրբ Աւետարան որ զստացողքս քո Ալլահվերտին, յիշեայ ի քո աՀաւոր գալուստն և դատաստանի։ յաւուր ահեղ դատաստանի։ ... 

Դարձեալ աղաչեմք զքեզ սրբազան Սուրբ Աւետարան որ զստացողքս քո Ալլահվերտին, յիշեայ ի քո աՀաւոր գալուստն և դաստաւորեայ յաջմէ քումմէ, զինքն և զիւրսն ամենայն որ լուան զասացեալն ի Պօղոսէ, որ ասէ, Երանի որ ունի զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ։ Արդ, երանութեանս արժանաորեալ բարէսէր և խաչաբարձ Ալլահվերտին և ստացաւ զանառիկ փարթամութիւնս զսրբազան Սուրբ Աւետարանս որ է զարդ և պարծանք սուրբ եկեղեցոյ։ Քրիստոս Աստուած ի քո աՀաւոր և Հրայխաղաց գալստեանդ քո (ք. 305բ) Տէր յորժամ փողք հնչեն և բարբառքն նուագեն և զհին աւուրցն Աստուած նստեալ յաթոռ քրովբէական և զՈրդին ընդ յամպս երկնից եկեալ նստեալ ի վերայ Թևոց հողմոց։ Ի յայնմ աՀաւոր և ի սոսկալի ատենին յիշեա Քրիստոս զհոգի սորին Ալլահվերտուն որ է դրախտաստուածային սրբազան Աւետարանս որ սայ փոխանէ Քրիստոսին սայ է դատող ուրացողաց որ չհաւատան զՀայր և զՈրդին և ուրանան զՍուրբ զՀոգին, ի յօխտեան նոքա տանջին և ի անլոյս խաւարն անկցին և յաւիտեան ոչ ազատին։ Արդ, Երանի տամ այնոցիկ որք դաւանողք են Յիսուսին, որպէս ասէ երգ շարականն Տէր Սուրբ Ներսէս Շնորհալի։ ՋաՀաւորեալ նշան խաչին, յարևելից փայլեալ ծագին. Հաւատացեալքն ի նա բերկրին և ուրացողքն կոծեսցին։ Արդ, ի (ք. 306ա) յաւուրն յայն յաՀագին փողն գոչէ Գաբրիէլի և ինն դաս Հրեշտակն յերկնից ի յարարածս ծառայէին։ Նա երանի տամ այնոցիկ որ Հաւատան զՀայր և զՈրդի և դաւանին Սուրբ Հոգին, նոքա առնուն պսակ փառաց և ընդ Հրեշտակս դասեսցին։ Արդ, Տէր, յիշեա զհոգի սորին Ալլահվերտուն և կողակցին Մարդայն խաթունփաշէն որ ստացաւ Սուրբ Աւետարանս ի յիշատակ իւրեանց և ծնաւղաց, արժանի լինին ուրհնեալ ձայնին և անթառամ սուրբ պըսակին և լուսեղէն առագաստին և անմատոյց սուրբ խորանին, ի յաջակողմն քո դասին, սրբոց փառացն կցորդին, և զինչ յանցանք և մեղք ունին, աստի ջնջին և ոչ յիշւին. լուսանման պայծառասցին, արեգական նման փայլին, յուրախութիւն անպատմելին, ամէն, ամէն և եղիցին։ Արդ, գրեցաւ սրբազան Սուրբ Աւետ(ք. 306բ)-արանս ձեռամբ մեղապարտ և մեղաւէր և մեղսաշաղախ դպիր Մուրատի, և յերկիր Արարատեան, ի գեաւղն Ակուռի, ընդ Հովանեաւ Սուրբ Յակովբ Հայրապետին և Նոյեան տապանին և Սրբոյն Ստեփաննոսի նախավկային. և ամենայն սրբոց որ աստ կան Հաւաքեալ, յիշատակ Ալլահվերտուն և իւրոցն ամենայնի մինչև ի քառասուն պորտն, առհասարակ ամենեցուն ողորմեսցի իւր աՀաւոր և ի միւս անգամ գալըստեանն և դաւաւորէ զհոգիս սոցա ի յայն փառք, որ ոչ անցանէ, ի յայն կերակուրն, որ անքաղցելի է, ի յայն կեանքն, որ անծերանելի է, ամէն։ Հայր։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա.— Սուրբ Աւետարանս գրեալ է ի Հայոց թիւ ՌՃԴ-ին (1655), և թուականին Քրիստոսի 1655։ Սուրբ Աստուածածնի եկեղեցոց Մոզդոկայ, Թադէոս Աւագ քաՀանայ խոսրովեանց, ծխատէր տանս Յովհաննէս Բաղչեանց։

Թ. 56բ.— Յովանէս, Գրիգոր. Մարուքայ։

Թ. 63ա.—Գրիգոր։

Թ. 67ա.—Գրիգ.։

Թ. 177ա.—Գրիգոր, Արեկ։

Թ. 306ա.—Ես Աքուեցի Մարտոս մի հօրս անուն Հարութիւն, մօրս անուն Մարլոս, մի որդիս Յարութիւն, Բ աղջիկս որ էն հանգուցեալ կամ կենթանի օվ կարդայց մի բերան ողորմի ասի։

Թ. 306բ.—Քուր Գուլխանդէն և զԹոռն Մովինարն, Մուրատին, Գրիգորին, Ղումաշին, Սուսամբարին։ Գ սարգայգ Գրիգորին և իւր կողաքցոն (բ. 307ա) Ջադուկոն, դուսրն Մարքրտին, խանըէկոյն, Եղօյին և իւր կողաքցոն Մարանին, եղբարըն Բաղօյին, իւր կողաքցոն Նոպարին։ Ես Աքուեցի...։

## № 112
## ՄԱՇՏՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 273։—ՊՐԱԿՆԵՐԸ՝ 23, յուրաքանչյուրը 12 թերթից։—ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 20,5×14×6 սմ.։—ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ։—ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, վրան ճնշումով նկարված են խաչեր և զարդեր։ Կողքի առաջամասում փոքրիկ մեխերով ամրացված է մի փոքրիկ պղնձյա խաչ 5×5 սմ. մեծությամբ։—ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից կա 4 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 5 թերթ թուղթ և մեկ թերթ սևացած ու հնացած մագաղաթ, մանր երկաթագրով գրված Ավետարանի պատառիկ (Ժ—ԺԲ դ. դ.)։—ՎԻՃԱԿԸ՝ բավարար։—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։—ՏՈՂԵՐԸ՝ 22։—ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։—ԳԻՐԸ՝ բոլորգիր։—ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան Հասարակ ոճով նկարված խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր, թռչնագրեր և զարդագրեր։—ԳՐԻՉԸ՝ Մարտիրոս քաՀանա։—ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մուրատ։—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1680 թ.։—ՎԱՅՐԸ՝ Գնունյաց երկրի Ճահգալեի գյուղ։—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 232ա.—Զմեղաւորս գծողս յիշել աղաչեմ ի սուրբ յաղօթս ձեր։

Թ. 265ա.—Յիշատակարան գրոցս.

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբո յաւիտեանս յաւիտե-

նիւ, ամէն։ Որ ետ կարողութիւն Հոգւոյն Սուրբ տկար անձինս և սխալոտ բնութեանս հասանել յաւարտ հոգւի ընկալ և նոր օրինացս հոգաբարձու սուրբ տառիս՝ որ կոչի Մաշթոց, որ յինքն գրաւեալ է զամենայն օրէնս քրիստոնէական, զմեղսաքաւիչ մկրտութիւնն և զհրաման ամուսնութեան (p. 265բ) և զհանգիստ ամենայն ննջեցելոցն և այլն ամենայն ըստ կարգի, լի և առատ, պարզ և յստակ շարականօք և սաղմոսիւք, ի լաւ և յնտիր օրինակէ, և եթէ սխալութիւն, կամ պակաս, կամ քերագիր, սատ գտանի, ի սուտ և ի փծուն գրչիս է և ոչ յօրինակէն, այլ աղաչեմ զամենեսեանսդ, որք ունիք զհանճարս քերթուածութեան զաւելորդն բառնայք և զպակասն լնուք և վասն սխալմանցն թողութիւն շնորհեցէք մեղաւորիս, որ եմ սուտ անուամբ քահանայ, և կոչիմ Մարտիրոս, և գործովս յոյժ հեռացեալ և թափուր յամենայն բարեմասնութեանց. զառածեալ և մեղօք գլորեալ, սակայն ոչ յուսահատեալ ի մարդասիրէն Աստուծոյ, զոր շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ Նորին աւարտեցի զսուրբ գիրքս ի թուականութեանս հայոց ՌՃԻԹ (1680), ի յերկիրս Գնունեաց (p. 266ա), ի գեղս Շահգալդի, ընդ հովանեաւ Սրբոյ Խաչիս, ի դառն և ի նեղ ժամանակիս, որոյ ցանկացող եղև աստուածային բուրաստանից սրբասէրն Մուրատ, և ստացաւ զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն, և ծնօղացն իւրոց, հօրն Մարտիրոսին և մօրն Խանումին, կողակցոյն Սառին, և որդւոցն իւրոց Տէր Պետրոսին։ Եւ մեծ պապերացն Շյապին, և որդւոցն Միրաքին, Տէր Գրիգորին, Զիրաքին, Շիրաքին, լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցա և Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։ [Դ]արձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Տէր Պետրոսին և ծնօղացն իւրոց Մուրատին, և Սառին, կողակցոյն Հոռոմին, և զաւակացն Սիմէոնին, Խանումին, Աբրահամին, հանգուցելոցն Մելքսեթին, Գաֆարին, Սառէն, լի բերանով Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւս անգամ գալուստն, ամէն։

Թ. 266բ.—Դարձյալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Աւէդին, կողակցոյն Շնահւորին, որդոյն Մուրատին, կողակցոյն Եղիսին, դստերացն Սառին, Եղիսին, և թոռանցն Գրիգորին, Կիրակոսին, Աւէդին, Դանիէլին, Սարգսին, Մկրտչին, Շնորհաւորին և զաւակացն նոցին Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի, Ամէն։ Վերստին յԱստուած ողորմի ասացէք Գրիգորի կողակցոյն Զինարին, փոխեցելոյն Ասլիխանին, Կիրակոսին, կողակցոյն Ասմինին, Դանէլին, կողակցոյն Թուրվանդին, լի բերանով Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւս անգամ գալըստեանն, ամէն։

Դարձեալ աղաչեմ զդասս սրբազնումար քահանայից և սարկաւագաց և ժողովրդոց (p. 267ա), զի լի բերանով և բոլոր սրտիւ և հաստատուն հաւատով յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զյառաջ ասացեալն զստացօղ սորա զՄուրադն, և զծնօղսն իւր զՄարտիրոսն և զՀանումն, և զեղբարսն իւր զՏէր Յովանէսն և զՅովսէփն, և զեղբօր որդին իւր զՄիրաքն և զամենայն ազգատոհմն իւր զկենդանիսքն և զհանգուցեալսն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն, ամէն։ Կրկին յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Սառին, քուերն Եղիսին, Սօլթանին, դստերացն Մարանին, առն իւրում Սահակին, Խոռոմին, Ջանազանին, Աննային և որ կարդա սաէ զողորմին միոյն Ո առցէ ի Քրիստոսէ, ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.—Խոտեխոլա... Աստուած խաղաղութիւն ածի խուտյաթրի սուտայ գ.. գրէ ի վերայ հաւկիթին որ ոչ դօղցըվորին կորուստէ լավաշ ագս աքս տագս Նատա։ Տէր ողորմեայ։*

*Թ. 1բ.—Պիմիլահի րռահման ըռահիմ չաղսահայ վէլէյլի ղասաճայ մաւատա ճարաքըշատի քայվէմազ ալայ ախրախուխէյրի քայմին ալուշայ ոլալասայու ֆայի, ատտիքայ ըրսն նեյուքայ ք ֆաթայ ըր ըղյալամենէ ճիտքայի ւտի իման քֆյօայմէ վաճայ տաքայ ղայիլան ֆարազօնայ ֆարքամ մալաթ ի մայև ալաթաի խհար վէամ մայիլ։ Լօաթան ահար և ամայ մենամաթի ըրուպութ քայ տուճօզայ իլաթիռ այօ և աճհետ ուալիհիլ և ալաւ քալազայու։ Արիայ ըրըզամ պատ շուտ համհանիհամ հանիպրզայ մունի պուհէք մարի մուսայ պութարի անիշա մասմուխլուս մար խալոյէյ (p. 2ա) հետայ մութուղարապ յաթմալէն։ Բրաթպմուրատշամ սիշլար ամթամամ թաքուստամամի անողլի մուսանին զուլիլան դատողսուն լէյամանուն մօհրի իլան սալամ ուալիքըմ մուսայ սուտամ տուրհարօն հւլի նամտուր թուր ապղաննդսն մտուրղի պահ պառուրտուր ալահու նամարան սաւալ մուխլուսան մթխայս անալ լհում մաճադում մին քայ սիսառալում այզամարբ ուամիայպօնի ամրանու մօ հրի Սուլէմանի դաւուր քում ֆէյիշայամ ուշք քումսամ շթսայ յայեթի վէ ւյուճտահ հուըահ հան (p. 2բ) հիսին և ալա, միսիճին իճիիճէ աշէն սրիճայաւդ վմալայմին խօկարդայ. ամէն։*

*Վասն Խ հօրն կարդարէ հմարի կամ։*

*Թալեխաթուն զամլիթայ ամութթիթաբէարուտ սյաբուս ար. սիսիանէխա խարուբին արարէք։*

վասն դիվանի գնալէ համար ըկայս է ածօվն։

Թ. 3ա.— Յիշատակ է Մաշտոցս Յօվանէսին, իւր կողակից Ղիմօին, իւր որդի Մարկոսին, կողակից Դաստակուլին, իւր որդի Սալվարին։ Դարցեալ յէշեցեկ Քրիստոսի և Աստուած ողորմի ասէք Մարկոսին որ զայս Մաշտոցս գնեց իւր հալալ ընչից եա ի ձեռն Տէր Գրիգորին, Աստուած զիւրաց հոգին լուսավորէ, ամէն։ Թվին ՌՃՁԱ-ի (1732) Տէր Գրիգոր օրհնեցին։ Թվ. ՌՃՁԴ (1735)-ին Թամազ եկաւ Թվ. ՌՃՂԴ (1745)-ին Սլէման բէկ մեռաւ, մեռաւ խաչում։ Թվ. ՌՄ (1751) Փաշե Նենէն եկաւ խամուր, աւերեց։ Թվ. ՌՄԵ (1756) Մուրատ գետ ցամքաւ, չարուխ վկերթին գին։ Թվին ՌՄԾԳ (1804) ջուր կարմուճ առաւ։

Թ. 3բ.— Էսր սալես զինչ մըլինի ի մի տղմն այ գրէ զայս մշկով և զաւրանով և վարդի ջրով Գ օր ծում կաց յերեկոյին քաղցր և նոան ջրով զայն քաղցր նոան ջրումն զայն Թուխտն կտրէ հետն այն ջրին խմէ ապայ պառկիր և տես թէ Աստուած ինչ շնորհք կուտայ քեզ։

...ն վկայ ...յ։

Զայս գրէ, ԻԾ հետ կարդայ, զերեսդ լվայ, զայս շատ փորձած է Աստուծով։ Գիր բանալեաց այսպէս արայ Ը-ին երս ԺԾ այլին երս Ծ-ի դասոր մնայ գիր է լոյն։

| | | | | |
|---|---|---|---|---|
| յձ | ցգճ | պյ | կայ | ըգն |
| պպ | նց | գյձ | ձճ | իի |

Թ. 4ա.— Յես Մառավրը չուղեայիցի Հօվանէս գրեցի գրըն վասն հեշելէ համարիկ, ամէն։

Թվ. ՌՄԾԱ (1802) զատօ ճնղաւ։

Թվ. ՌՄԾԴ (1805) մեռ չեղաւ, չւին հօլ կու խաղին, խած ընկաւ։

Թ. 4բ.—Ձկան գին

| | | |
|---|---|---|
| Օս Սագօն | բ | կտայր |
| մի Լոռօմ | ա | կտայր |
| մի Նազան | ա | կտայր |
| խց Վարդեռ | ա | կտայ |
| վա Ջըրօն | ա | կտայ |
| Տ Մինաս | ա | կտայ |
| ցը Մարիամ | ա | կտայ |
| Յունան | ա | կտայ |
| Սաֆար | զ | կտայր |
| կս Ղազար | ա | կտայ |
| Եգ Պօտօն | բ | կտայ |
| Զխօն | ա | կտայր |
| Գօզօր | բ | կտայր |
| Տէր Ծատուր | բ | կտայ |
| Տէր Առաքել | ա | կտայ |
| Տէր Այվազ | բ | կտայ։ |

Թ. 100ա.—Սաղացողի գրոցս Տէր Պետրոսին և ծնողացն իւրոց Մուրադին և Սառային։

Թ. 267ա.—Դարձեալ աղաչեմ զձեզ եղբարք Թաղութին շնորհեցէք բազմամեղ Մարտիրոսիս, որ ի ՌՃԼԳ (1684) թըւին զյիշատակս գրեցի, ի Սէֆիբէկ գեղն, այն տարին որ Միրզամզգնի լաճն Ըրահիմ բէկն փախեաւ ի խոշաբայ, և գնաց ի Ջուլամէրկ առ Եզդի չէրն, վերջն Աստուած գիտէ։

Թ. 268ա.—Յիշատակ է Մաշտոցս Պէտօին, կողակցոն Զմրուխին, միւս կղակցոն Մարգտին, հորն Սարգին, յառհ. Յազկուլին, մեծ պապին Շահինին որ ըստացաւ հալալ վաստակօք, որ եառւր ի ձեռն Տէր Միխիթարի որդի Աւէտիսին, բարեվայելումն։

Թւին ՌՄԽԶ (1797)-ին Տէր Միխիթարը վաղճանեաց, որ գրեցաւ ձեռամբս Տէր Առաքել չինչ քահանին, դարցեալ խանպէկին, Հրեղէնին։

Թ. 268.—Մեծ Աւետիս, Սարգի, Թումաս, Ստեփաննոս, Մխիթար։ արգդեզ։

Թ. 269ա.—Յիշատակ է Մաշտոցս այս Տէր Գրիգորին։

Թ. 271բ.—Սարգիս Գեորգով։

Թ. 272ա.—Բեսդու արգայն (որդին իւր) թագագւորի Անփիլիփոս եա աղջոյն արգաին որդոյն ոչ եա տասց... համար սուրբ... թագաւորաւորդին իմ ացաց եպիսկոպոս դա մեզ բաւակէս թագաւոր դա ոչ պատէմ յոյբ արկաց թագաւոր սասցան... խիստ դուման կանաց և թագաւոր զանազանութիւն ոչ ցուցնիս իսկ զանմահն Աստուած Միածինն իւր և զադա... տանյ տանիցի։ Սուրբ Անդոնեատես դննեկանող մարդիկ եղանեին երեկ իշնա ոչ ղողատ այն դար ձեռօբ, ոչ վայր ընկաւր երկիր ուրախանար անկում հայ։ Այլը վրայ թուին լինեին յիրկինս միտաննին հակս ծա եա ղադ ամնովտա հաց։

Թ. 272բ.—Այս է գըշափորձն։

Բսմի ալայ աւսուտայ մօղաւ ալայ ծուրի ալայ, Տէր Աստուած, Տէր Աստուած, աչաւ քո կտրի գօղայս աչուչ ծառայիս քո զի կասիր արար ի կատակար որի սա է դեղ գրէ լաւ աչայ աչ։

## № 113
## ՈՂԲ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ

ԹԵՐԹԵՐԸ՝ 12։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 17,7×12,1×0,2 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ չունի։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյունյ։— ՏՈՂԵՐԸ՝ 23—24։ ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ Նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։ ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ—ԺԹ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի Դիվանատան արխիվից։ Զափածո գրությունը տպված է «Արարատ» ամսագրի 1895 թ. դեկտեմբերի համարում։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Քարոզ Նորին Սիմէօնի ի նոյն երկրորդ շաբաթն Մեծի Պահոց և բնաբանն թէ արասցես ըստ օրինակին որ ցուցաւ քեզ (ԻԲ)։

*Ըստ վարդապետաց ի յերիս բաժանի, ի յանցեալն, ի ներկայն և յապառնին, բայց մեք զայլ պարագայսն և զորպիսութիւնս թողեալ ասասցուք որ ինչ նարդենիս պիտոյ է մեզ ի բանիս։ Արդ յերից ժամանակացս յայսցանիցս, զանցեալն ունեցաք կատարելապէս, զներկայն ունիմք անկատար, և զապառնին ի կարծիս և զի յամենայն իրողութիւն կատարեալն գովելի և կատարելագոյնն հաւատալի և հեռևելի, և ոչ անկատարին և կարծելոյն, քանզի որպէս Աստուած վսկ. ասի ճշմարիտ և կատարեալ, զի ոչ երբէք սուտ և ոչ խաբի, այլ վասն ամենայն ճշմարտութեամբ ասէ և ճշմարտութեամբ ուսուցանէ. ըմ. Աստուած հաւատարիմ է, և ոչ գոյ ի նմա անիրաւութիւն և այլն։*

*Թ. 2ա.— Ողբ ի վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ վասն տիրելոյն տաճկաց, ասացեալ ի յԱբրահամ ականատես վարդապետէ։*

*Յինն հարիւր, ՝ւ երկու (1453) թուին,*
*Դառն և ի վատ ժամանակին.*
*Տէր բարկացաւ յոյժ վերստին,*
*Ազգին Հոռմոց յունականին։*
*:*

*Թ. 10ա.— ... Ես Աբրահամ՝ մեղօք լըցեալ,*
*Բազում ցաւօք՝ զողբս յօրինեալ.*
*Քանզի զԿոստանդինուպօլիսն,*
*Ի բարութեան՝ ժամն եմ տեսեալ։*

*Երեք ամիս՝ անդէն կացեալ,*
*Եւ զսրբութիւնս՝ ուխտ արարեալ.*
*Զպատմուճանըն՝ Քրիստոսի,*
*Բազում անգամ՝ աչօք տեսեալ։*

*Զձեզ աղաչեմ՝ յոյժ աղերսեալ,*
*Որք հանդիպիք՝ զողբս ընթերցեալ.*
*Թէ գըտանէք՝ ի սմա սըխալ։*
*Ներումն առնել՝ ոչ մեղադրեալ։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՈՒՆ

*Թ. 1բ.— Տպուած է «Արարատ»-ի 1895 թ. դեկտ. տետրակում։*

## № 114

### ԱՒԵՏԱՐԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 238։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 17,5×13,5×4,2 սմ.։ — ՆՅՈՒԹԸ՝ գեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ ընկել է։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ սկզբից և վերջից թերի։ Թղթերը բորբոսնել և իրար կպել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան գեղեցիկ խորաններ և լուսանցազարդեր, թռչնագրեր և զարդագրեր, խաչեր և զարդանկարներ, թռչուններ և սրբեր։ Կան երեք ավետարանիչների սիրուն նկարները (թ. թ. 70բ, 120բ և 197բ)։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԾԱՂԿՈՂԸ՝ Զաքարիա եպիսկոպոս։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԶ—ԺԷ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 70բ.— Ցնկարող Սբ. Աւետարանիս Զաքարիա եպիսկոպոս, յիշեա աղաչեմք։*

*Թ. 120ա.— Երեսս ի գետին դնեմ և աղաչեմ զձեզ յիշել զծնօղսն իմ և Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

## № 115

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

### (Վարքաբանություն)

*ԹԵՐԹԵՐԸ՝ 292։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 24, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 15×11×5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ հաստ գեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ վերջից մի թերթ հաստ պատռած թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ կազմը քայքայվել է։— ԳՐՈՒԹՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ առանց ճնշման։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան քիչ թվով և շատ հասարակ արվեստով նկարված զարդագրեր, լուսանցազարդեր և թռչնագրեր։ Վերնագրերը գրված են կարմիր թանաքով։— ԳՐԻՉԸ՝ բանասեր Ղազար։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ դար։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Բաքվից, որպես նվեր Տիրայր վարդապետ Մարտիկյանի կողմից։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ձեռագրի գիրը տեղ-տեղ փոփոխվում է։ Մատյանը ունի հետևյալ գլխավոր վեց բաժինները.*

*Ա. ԺԵ դարի պատմագիր Թովմա վարդապետ Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց»։*

*Բ. Տաղարան,*

*Գ. Կարճ պատմություններ և առակներ,*

*Դ. «Պատմութիւն պղնձէ քաղաքին» (Բաղդադի Աբդու-Մելիք խալիֆայի)։*

*Ե. Պատմություններ Հին և Նոր Կտակարաններից, սրբերի և ճգնավորների կյանքից։*

*Զ. Մծբնա Ս. Հակոբ հայրապետի կյանքը (բոլորգիր)։*

*Ստորև տալիս ենք բաժինների և հատվածների վերնագրերը.*

*Թ. 1ա.— Պատմութիւն համառաւտաբար վասն յարեևելեան թագաւորացն պղծոյն և չար գազանին Լանկ Թամուրայ և այլոցն, զոր արարեալ է քաջ վարժապետին Թումայ վարդապետին։*

Թ. 76ա.— Հարցումն երիտասարդին ընդ ծեր ումն վարդապետ վասն օգտի խրատ։

Թ. 95ա.— Պատմութիւն Սրբոյ հօրն Դանիէլի։

Թ. 96ա.— Պատմութիւն ծերոյ միոյ։

Թ. 97ա.— Պատմութիւն երկոյտասան հողմոց զոր ազդեմք ի կափմաց մտաց զոր լըւաք փոքր ի շատէ յաստուածային գըրոց, որ ելանեն ի չորրորդ հրեշտաց։ Վասն երգողացն ի Թորոս Մըշեցըւէ ասացեալ է։

Թ. 101ա.— Տաղ վասն գալոյ Ֆռանկին։

Թ. 103բ.— Տաղ Ալէքսանոսի ճըգնաւորին։

Թ. 107ա.— Տաղ խտըրշին։

Թ. 136ա.— Տաղ Պարոնլուս Նահատակին, Վրդանէս վարդապետէ։

Թ. 139բ.— Տաղ վասն ագահութեան, Նաղաշին ասացեալ։

Թ. 142բ.— Տաղ գեղեցիկ ի վերայ Կիւրակէի։

Թ. 143բ.— Տաղ շահաւէտ հոգոյ։

Թ. 145բ.— Տաղ Նաղաշին ասացեալ ի վերայ մեղաց։

Թ. 147ա.— Դարձեալ տաղ հոգոյ շահաւէտ։

Թ. 148բ.— Տաղ գեղեցիկ հոգոյ։

Թ. 149բ.— Տաղ գեղեցիկ ոգէշահ։

Թ. 150բ.— Տաղ Աստուածածնին։

Թ. 153բ.— Տաղ և գովասանք ողորմութեան, ասացեալ Առաքել վարդապետէ։

Թ. 154բ.— Տաղ խրատական ի վերայ անձին Նաղաշ վարդապետէ։

Թ. 157բ.— Տաղ և գովասանք աղօթից Առաքել վարդապետէ։

Թ. 158բ.— Տաղ Զ կիրակէի Աղուհացիցըն։

Թ. 160ա.— Տաղ գեղեցիկ, Առաքել վարդապետէ։

Թ. 161ա.— Տաղ Կեչառացում ասացեալ հոգէշահ։

Թ. 163ա.— Ոտանաւոր և տաղ հըպարտութեան, ասացեալ Առաքել վարդայպետէ։

Թ. 166ա.— Տաղ գեղեցիկ ի վերայ վարդին և պլպուլին։

Թ. 168բ.— Տաղ Գրիգորիս Կաթուղիկոսի ասացեալ է։

Թ. 172բ.— Տաղ Ֆրկան ասացեալ վասն մեղաց։

Թ. 173բ.— Տաղ կիրակէի։

Թ. 174բ.— Տաղ գեղեցիկ ի վերայ մեղաց։

Թ. 175բ.— Տաղ Նաղաշին ասացեալ ի վերայ մեղաց։

Թ. 177ա.— Տաղ հոգէշահ է։

Թ. 178ա.— Գիրքըս այս պիտանի։

Թ. 197ա.— Պատմութիւն պղնձէ քաղաքին որ օրինակ է սուտ աստընվորիս, զոր թարգմանեցին իմաստասէրքն զայս։

Թ. 234ա.— Խրատ վասն զղջման և արտասուաց։

Թ. 259ա.— Պատմութիւն Իգնատիոսի։

Թ. 266բ.— Պատմութիւն Պօղոսի անապատաւոր։

Թ. 272ա.— Վարք երանելոյն և Սուրբ ճըգնաւորին Մարտիանոսի կրօնաւորին։

Թ. 280ա.— Հրոտից ԺԶ և յուլիս ԻԲ վկայաբանութիւն Սրբոյն Գորանդըտայ։ (Այս Գորանդուխտ կին էր մոգպետին ի պարսից յաւուրս թագաւորացն յունաց և պարսից Մուրկայ և Խոսրովու...)։

Թ. 284ա.— Քաղոց է և դեկտեմբեր ԺԵ տաւն է Յակոբայ Մծբնայ Հայրապետին։ (Սա և հաջորդ մյուս թերթերը, 284ա—291բ, գրված են բոլորգիր գրով։ Այս բաժինը ամենայն հավանականությամբ պատկանել է մի ուրիշ ձեռագրի)։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 75բ.— Լեր մեզ միջնորդ հաշտութեան օգնականութեամբ ամենայն սրբոց, զի փըրկեսցէ զմեզ յանօրինաց և ի մեղաց և ի դիւաց, և ազատէ զմեզ ի դժոխոց բարեխաւսութեամբ ամենայն սրբոց։ Մանաւանդ զիս զմեղսամած և զտառապեալ հոգիս զՂազար բանասէրս հայ(թ. 76ա)ցեմ ի յառատաձիր պարգևողէդ պահել անսայթաք ի յորսողին խաբմանցն, ամէն։

Թ. 124ա.— Եւ ի ձեռն սոցին բարեխօսութեամբ և մախթանաց Տէր Յիսուս թողութիւն արայ մեզ և ծնօղաց մեր և հարազատ մեր և ամենայն հայկազան սեռիս, կարգաւորաց և աշխարհականաց և ամենայն քրիստէից. ամէն։ Մանաւանդ և ինձ տառապեալ անձինս Ղազար բանասիրի և սակաւ գծագրողի զպատմութիւն քաջ հռետորիս մերում Թումայ մեծ վարժապետին։

Թ. 266ա.— Քրիստոս Աստուած մօրն և տղին բարեխօսութեամբն (բ. 266բ) և սուրբ ճըգնաւոր զգեստաւորացն աղաւթիւք շնորհեայ գըծողի սորայ և ամենայն հաւատացելոց ապաշխարութեամբ կեցուցանել զհոգիս իւրեանց և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.— Պատմութիւն վասն պղնձէ քաղաքին։

Թ. 14բ.— Հայկազան սեռի, յոր և ժաման։

Թ. 21բ.— Եւ հօվիւ Քրիստոսին...

Թ. 22բ.— Սոկրատէս գերահռչակ՝ է մեծահանճար իմաստասէր։

Թ. 24բ.— Օհանէս։

Թ. 59ա.— Հռութն Նազելի։

Թ. 66բ.— Սղական անառիկ ամրոց ինչ ի գաւառին Տարոնոյ, Սլուկն հպր ամրացաւ ընդդիմանալով արքային Տրդատայ, Խոր. 2 81։ Սմիզանդ Ջահոն գետոյ, այսինքն Ովքսոս ելանէ Հնդկաց Յեմաւոն լեռնէ և անկանի ի ծովն Կասպից, յաշխարհին սկիւթացւոց,

այսինքն Թաթոց Մուստաղը։

Թ. 99բ.— Օհանէս։

Թ. 119բ.— (կնիք) Միքայէլ, 1860։

Թ. 124բ.— Հրոց։

Թ. 126բ.— (կնիք) Մկրտիչ, 1899։

Թ. 131բ.— Նույն կնիքից երկու հատ։

Թ. 195ա.— Ով որ սաէ մեզ ողորմի, բիւրապատիկ ուրեան լինի, ամէն։

1905 փետր. 16 Կիւմիւշխանէ։

Թ. 283բ.— Սուրբ Հայրապետն մեր փառազգեացն Յոհաննէս Աւձնեցի, ի գաւառէն Տայոց, ի գեղջ յեն որ կոչեալ Ձոռն Աստուծոյ յազատ ազգ։

Սբ. հայրն Յակոբ։

Վերոհիշյալներից բացի կան բազմաթիվ էջեր զանազան հիշատակագրություններով, հայերեն և հայատառ թուրքերեն լեզվով, մեջբերումներ Աստվածաշնչից և այլ տեքստերից։

## № 116

## ՏՕՆԱՑՈՅՑ (թ. թ. 1ա—144ա) ՊԱՐՋԱՏՕՄԱՐ (թ. թ. 144բ—165բ)

ԹԵՐԹԵՐԸ՝ 165.— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 14, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 15×11×4 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ սկզբից և վերջից պակաս։ Սկզբից մի պրակ ընկել է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 19 (բոլորգիրը՝ 20)։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր (բոլորգրով են գրված հետևյալ էջերը՝ 84ա, 144բ—156ա)։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան միայն մի քանի զարդագրեր, որոնք բոլորովին արժեքից զուրկ են։— ԳՐԻՉԸ՝ անհայտ.— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԷ—ԺԸ դ. դ.— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 83ա.— Ոտանաւոր խրատ ուսիր:

Արդ պատուիրեմ կարդայ և տես,
Եւ խրատեմ թէ միտ դնես.
Սրտի մտօք զԱստուած սիրես,
Եւ զպատուիրան նորա առնես։

Ջտօնացոյցս լաւ պահես,
Եւ զամենայն տօն տեսանես,
Զժամատեղն ժիր պահես,
Զօրըն սը[ր]բոց տօնիւ պատուես։

Ընդահատակսն յիշատակես
Եւ սաղմոսիւք միշտ աղօթես,
Շարականաւ աւրհնաբանես։

Եւ խունկ անուշ մատուցանես,
Եւ ի տաճար իւրեանց մտցես,
Ջահ լուսացնես և մոմ վառես,
Եկեղեցոյ աւել աձես։

Այս բաւական է թէ լսես
Եւ Աստուծոյ միշտ ծառայես.
Եւ անխափան զայս կատարես
Զաւրքսն (թ. 83բ) Աստուծոյ ուրախ առնես.

Յորժամ զկենցաղս վճայրես,
Նոցին փառացն հասանես,
Զարքայութիւնն ժառանգես,
ԶԱստուած նոքօք փառաբանես։

Արդ՝ պաղատիմ լալագին ես
Ըղառածեալ գծողս յիշես.
Եւ դուք յիշեալ ի Տէր լիցիս,
Յորժամ տեսցես փառօք յերկրիս։

Թ. 144ա.— Ջեռքս փտի և հող դառնա
Գիրն յաւիտեան երթա մնա.
Ով որ կարդայ ուրախանայ։
Ամէն։ Հայր մեր որ…

## № 117

## ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 273։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 23, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 13,5×9,5×6,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ մագաղաթ։— ԿԱԶՄԸ՝ թավշապատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից և վերջից երկուական թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ լավ, միայն կազմը մի քիչ մաշված է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Ջուղայի դպրոցին պատկանող մի հիանալի ձեռագիր է սա։ Ունի շատ գեղեցիկ բազմաթիվ նկարներ, ավետարանիչների և տերունական կյանքից վերցված։ Ձեռագրում կան 16 էջ տերունական նկարներ և 10 էջ համաբարբառ։ Յուրաքանչյուր Ավետարանի սկզբում կա տվյալ ավետարանչի նկարը (թ.թ. 27բ, 99բ, 143բ և 219բ), ինչպես նաև գեղեցիկ խորաններ (թ.թ. 28ա, 100ա, 144ա և 220ա)։ Սույն ձեռագրի զարդագրությունը ներկայացնում է հայկական մանրանկարչության մի հիանալի նմուշ։ Ունի շատ գեղեցիկ լուսանցազարդեր, թռչնագրեր, ձկնագրեր, ծաղիկներ, ծառեր, խաչեր, թռչուններ, զարդեր և սրբեր։ Կա նաև մի հատ մարդագիր (թ. 28ա)։ Գործածված են որդան կարմիր, ոսկեգույնը և ուրիշ վառ գույներ։ Ձեռագրի մանրանկարչությունը արվեստի շատ գեղեցիկ նմուշ է և նկարված է մեծ վարպետությամբ ու ճաշակով։— ԳՐԻՉԸ՝ Մկրտիչ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ մահտեսի Մարտիրոս.— ԾԱՂԿՈՂԸ՝ Ալահվերդի Փանոս (տեսնել թ. 15բ-ի նկարը)։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1669։— ՎԱՅՐԸ՝ Ջուղա (Շոշ) Սպահան.— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Բաքվից, որպես նվեր Տիրայր վարդապետ Մարտիկյանի կողմից։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 273բ.— Փառք, պատիւ և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն միասն տերութեանն և մի բնութեամբ աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից ամէն։ Արդ գրաւ եղև և կատարեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքս Շօշ, որ է Սպահան, ի թվականիս հայոց ՌՃԺԸ (1669) ամի ի գեղաքաղաքս Ջուղայ, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ Ջուղայեցոյ, և ի արքեպիսկոպոսութեանն մերոյ նահանգիս Ջուղայոյ Տեառն Դաւթի սրբասիրի և քաջ րաբունապետի։ Եւ ի թուագրութեանն պարսից՝ Շահ Սուլէյմանի։ Ձեռամբ յոգնամեղ և անարժան գծողի Մկրտչի։ Ի խնդրոյ առն բարեպաշտի և քրիստոսասիրի, Մահդասի Մարտիրոսի, զոր Տէր Աստուած վայելել տացէ յերկար ամօք՝ ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄահդասի Մարտիրոսն որ ստացաւ զՍուրբ Աւետարանս ի արդար վաստակոց իւրոց. յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց, և որդոցն, ի դստերացն և ամենայն արեն մերձաւորացն՝ ամէն։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Յովսէփ Աւագ քահանայի Բունիաթեանցս*

## № 118
### ՏՕՆԱՑՈՅՑ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 79։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 6, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ 13×10×1,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից մեկ, իսկ վերջից հինգ թերթ։— ՎԻՃԱԿԸ՝ ոչ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 19։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ ԺԶ—ԺԷ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 20բ.— Հարց անհաւատից կամ չարը քրիստոնէից յարեան յԸՍԻԼըն կամ հետևին խօսիլըն արգելին։*

*Թ. 76բ.— Մնացեալ այր իմ սիրով որ։*

*Թ. 77ա.— Մնացեալ այր իմ սիրով սէր իմ բուօ դշվե չի դժոխո ամբառելին։ Միդադէճզմի։*

*Թ. 78բ.— Դարձեալ և այս գիտելի է թէ զինչ է յոբելեանն և այլն։ Յոբելեան Ծ ամի որով հրէայքն վարին և Տէր Աստուծոյ։ Այսպես կալ զհայ թվական Ժ ի վերայ ած, երբ ԾԾ, որ մնայ յոբելեան Լ։ Ընդտիքտիոնն ԺԵ ամ է, որով հոռոմք վարին և արայ այսպես. կալ զհայ թուականն և երբ ԺԵ ԺԵ, որ մնայ Ընդտիքտիոն է։ Բեսեքիստոն՝ է ամ է և արայ այսպես. կալ զհայ թուականն և երբ է-ի, որ մնայ Բեսեքիստոն է։ Ռնսոն Ե ամ կոչի։ Ի դասն...*

*Թ. 79ա.— Հայր իմ։ Հայր իմ պատուայկան լուայ..... վարդապետաց թէ մի մատծական աղօթքն է յոյժ օգտակար և պանծալի է..... առ այսօր տօն է գերամեծար և ծար և ծերագրոյն քոյ պատրաղ Տէր Պօղոսէն հասցէ շատ կարօտիւ բարև իմ թոռ Սէրօբին, գաս իմ օրհնութիւն առնուս ի Աստուծոյ ծառա տիրայցուէտ, մարիկէտ՝ Թագուհինէն, Հօռօմէն։ Հայր իմ պատուական լուա բարևի վարդապետաց, հայր իմ պատուայկան լուայ։*

*Թ. 79բ.— Թաթևոսի գիրս և բաիչև...*

## № 119
### ԺԱՄԱԳԻՐՔ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 242։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 12,5×9,5×4 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ վերջից երկու թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ ոչ բավարար։ Սկզբից մի պրակի թերթերը ընկել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 17։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ ոճով նկարված կիսախորաններ, լուսանցազարդեր, զարդագրեր և թռչնագրեր։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԷ—ԺԸ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։*

## № 120
### ԺԱՄԱԳԻՐՔ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 68։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 6, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ 11,7×8,3×1,7 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որից սակայն ընկել է կաշին։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ ոչ բավարար։ Սկզբից երկու պրակներ ընկել են, իսկ վերջից էլ պակաս է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ 17։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԶ—ԺԷ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն՝ ձեռագիրը նվեր է ստացված Սառա Էլիսանյանի կողմից։*

(Շարունակելի)